ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆ
minister@mindiaspora.am

Ես չեմ կարող իմ ինքնութեան մասին մտածել իմ հայութիւնից դուրս: Սա ինձ համար այնքան հիմնական է, որքան առաջին կայծը կեանքի: Ես պարտական եմ ամէն բան այն անպատմելիին, որ մեր իւրաքանչիւրի ներսում է եւ որը գալիս է իւրաքանչիւրի կենտրոնից, ե՛ւ ընտանիքի մի մասից, ե՛ւ հողի մի մասից, ե՛ւ մշակոյթի մի մասից[1]*:*

Ուիլիըմ Սարոյեան

Որքան խորիմաստ են մեծ մտածողի խօսքերը, որքան ճշմարիտ է ազգային ինքնութեան սարոյեանական ընբռնումն ու սահմանումը: Այսօր մեր առջեւ ծառանում է նոյն հարցը՝ ի՞նչ անել, որպէսզի ամէն մէկը հաւատարիմ մնայ իր ազգային ինքնութեանը: Հայը առանց մեծ դժուարութիւնների յարմարւում, համարկւում է տարբեր հասարակութիւնների, սովորում ընդունող երկրի լեզուն, սովորոյթները, ընկալում մշակոյթն ու աւանդոյթները: Եւ այս յատկութիւններին զուգահեռ ունենում է մի ներքին մղում, մի կայծ, բարոյական կայծ, որը փորձում է վառ պահել եւ փոխանցել սերունդներին: Երբեմն այդ կայծը կարծես մարում է, սակայն հայութեանը, հայրենիքին սպառնացող վտանգի պահին այն բոցավառւում է, տարածւում եւ դարձի բերում հայութեան շատ հատուածների:

Հայոց դարաւոր պատմութեան մէջ նախկինում երբեք ազգային ինքնութեան խնդիրն այնքան սուր դրուած չի եղել, որքան այսօր: Դրա հիմնական պատճառը թերեւս համաշխարհայնացումն է:

Սփիւռքն այսօր դիմագրաւում է լուրջ մարտահրաւէրներ. մի կողմից կրելով տարբեր լեզուների, մշակոյթների, քաղաքակրթութիւնների ազդեցութիւնը՝ հայ ինքնութիւնը որոշակի փոփոխութիւնների է ենթարկւում, միւս կողմից՝ Սփիւռքը ենթարկւում է անընդմէջ տեղաշարժերի, որոնք հիմնականում պայմանաւորուած են տարբեր տարածաշրջաններում աշխարհաքաղաքական լարուած իրավիճակներով, կրօնական, ծայրայեղական շարժումներով, պատերազմներով եւն.: Գաղթականական տեղաշարժերի

հետեւանքով Սփիւռքը բախւում է ինքնութեան պահպանման նոր խնդիրների: Ապրելով այլ էթնիկ միջավայրերում՝ հայերը ձգտում են յարմարուել տեղի պայման-ներին՝ միաժամանակ գործադրելով սեփական ինքնութիւնը պահպանելուն ուղղուած մեծ ջանքեր:

Ներկայ պայմաններում արագացել են Սփիւռքում ընթացող ուծացման գործընթացները՝ ընդունելով աննախադէպ ծաւալներ: Հայկական ինքնութիւնը խոցելի է դառնում. աւելանում են խառնամուսնութիւնները, փակւում հայկական դպրոցները, նուազում է մայրենի լեզուով խօսողների թիւը, աւելանում են հայկական կեանքից հեռացողները, ինչի հետեւանքով վնասւում են հայ ինքնութեան արմատները, ջլատւում է հայկական համայնքների ներուժը:

Սփիւռքում հայոց լեզուն չկիրառելու գործընթացը սպառնալի չափեր է ընդունել յատկապէս երիտասարդների շրջանում, որոնք աստիճանաբար հեռանում են ազգային արմատներից, խօսում բնակութեան երկրի լեզուով: Զարգացումների նման տագնապալի ընթացքը թոյլ չի տալիս լաւատեսական կանխատեսումներ անել մէկ-երկու սերունդ յետոյ հնարաւոր հայախօսութեան վերաբերեալ:

Սփիւռքահայութեան հետ փոխյարաբերութիւնների հարցում հայոց պետութիւնն ունի քաղաքական յստակ մօտեցում, այն է՝ աշխարհի չորս ծայրերում պէտք է ստեղծուեն կենսունակ, համարկուած համայնքներ՝ հանդիսանալով իւրօրինակ քաղաքակրթական կամուրջ Հայաստանի եւ տուեալ երկրների միջեւ, ընդ որում՝ հայերը պէտք է լինեն իրենց բնակութեան երկրների լիիրաւ քաղաքացիները:

Ընկերաբանական գիտութեան մէջ ինքնութեան հարցում ներկայումս առաջնայնութիւնը տրւում է ինքնագիտակցութեանը, այսինքն՝ հաշուի է առնւում այն, թէ ինչպէս է անձն ինքն իրեն բնութագրում: «Ո՞վ է հայը» հարցադրումը սուր կերպով առաջադրելու պարագայում յանգեցնում է օտարման եւ կորուստների: Որոշ դէպքերում միայն մէկ իրադարձութիւնը հայկական ինքնութիւնից գրեթէ ամբողջովին հեռացած անձանց մէջ կարող է առաջ բերել այդ ինքնութեան ակնթարթային վերարթնացում, ինչպէս եղաւ, օրինակ, Սպիտակի երկրաշարժի ժամանակ, ղարաբաղեան շարժման, ապա Արցախում 2016ի ապրիլեան պատերազմական գործողութիւնների ընթացքում:

Հայ ինքնութիւնը դիպուկ ձեւով է բնութագրել Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը. «*Հայի ինքնու-*

թիւնը չպէտք է լինի բարդ եւ խորհրդաւոր, այն պէտք է հրաժարուի լեզուական, կրօնական, մշակութային, կուսակցական կամ գաղափարական տարանջատումներից: Անգլիախօս, թուրքախօս, ռուսախօս կամ հայախօս հայը, առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը, սոցիալիստ կամ ժողովրդավար հայը, ազատական կամ ազգայնական հայը պարզապէս հայ է»[2]:

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՍԻՒՆԵՐԸ

Հայկական ինքնութիւնը պահպանող, ամրապնդող հիմնասիւներն են հայրենիքի հետ զգայական կապը, հայոց լեզուն, հայ մշակոյթը, հայկական ժառանգութիւնը, պատմական յիշողու-թիւնը, քրիստոնէութիւնը, հայ ընտանիքը, բարքերը (աւանդոյթներ ու սովորոյթներ), հասարակական կազմակերպութիւնները (դպրոց, եկեղեցի, թանգարան, ազգային-մշակութային հաստատութիւններ):

Հայկական ինքնութեան պահպանման հարցում դարեր իվեր անփոխարինելի դերակատարութիւն ունեն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Սփիւռքի հայկական համայնքները, համահայկական, համայնքային կառոյցներն ու սփիւռքեան կազմակերպութիւնները: Հայ ինքնութեան պահպանման գործում անվիճելի է անկախ Հայաստանի Հանրապետութեան դերակատարութիւնը:

Հայրենիքը հայ ազգային ինքնութեան գլխաւոր յենքն է: Հայրենիքն ազգի գոյութեան, ինքնութեան եւ արժանապատուութեան առհաւատչեան է, հայ մնալու, հայ ապրելու խարիսխը: Արտերկրում ապրող հայերի ճնշող մեծամասնութեան համար Հայաստանը լոկ պատմական հայրենիք չէ, այլ իր օջախը, իր տունը, իր հայ մնալու փրկութիւնը: 25ամեայ հայկական երկու հանրապետութիւնների, հայկական հողի շնորհիւ է ազգը միասնական, հզօր ու կենսունակ: Միայն զարգացած, կարող, պաշտպանուած Հայաստանն է հայութեան օրրանը: Հայրենիքի հետ մշտական գիտակցական ու զգացական կապի շնորհիւ է Սփիւռքում ուծացման տարբեր վտանգներին դիմակայող հայը կառչած մնում իր արմատին, իր ազգին, իր ինքնութեանը: Հետեւաբար հայ ազգի, հայրենի պետութեան գերխնդիրը պէտք է լինի հզօր Հայաստանի կառուցումը եւ նրա շուրջ ողջ ազգի համախմբումը:

«*Հաւաքական ինքնութիւնը հողէ մը կը սկսի, նոյնիսկ եթէ այդ հողը հեռաւոր իրականութիւն մըն է, հեռաւոր յիշատակ մը, կամ նախնական պորտալար մը: Հիմնական իրականութիւնը հողն*

է...»[3]՝ իրաւացիօրէն նշել է հայագէտ, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան քահանայապետական պատուիրակ Լեւոն Արք. Զեքիեանը:

Ա) ՀԱՅԵՐԷՆԸ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Մայրենի լեզուն, պետականութեան հետ միասին, հայ ազգի պահպանման հիմքն ու կարեւորագոյն գրաւականն է: Յատկապէս Սփիւռքում հայերէնի իմացութիւնն ամրապնդում է ազգային ինքնութիւնը: Լեզուն ուծացումը կանխող հիմնական միջոցներից է, աշխարհի ցանկացած ծայրում հայ հանրութեանը միաւորող, համախմբող գլխաւոր գործօնը:

Ազգային լեզուն ազգային գաղափարախօսութեան կարեւորագոյն հիմքն է: Հայոց լեզուն, ազգային ինքնագիտակցութիւնը հայ ժողովրդի գոյութեան անհրաժեշտ պայմաններից են: Հայաստանի Հանրապետութիւնն աջակցում է իր սահմաններից դուրս բնակուող հայերի հայոց լեզուի պահպանմանն ու տարածմանը[4]:

Ճակատագրի բերումով եղեռնահար եղաւ նաեւ հայոց լեզուն, կտրուեց արմատից, ոչնչացուեցին տասնեակ բարբառներ: Սակայն աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում մայրենին պահպանուեց եւ փոխանցուեց 21րդ դար (4րդ, 5րդ սերունդներին): Համաշխարհայնացման արդի պայմաններում թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում հայերէնի, մասնաւորապէս՝ արեւմտահայերէնի պահպանման եւ տարածման խնդիրը օրակարգային է դարձել: Սփիւռքում ե՛ւ արեւմտահայերէնը, ե՛ւ արեւելահայերէնը վտանգուած են իւրովի: Սփիւռքում եթէ պակասում են արեւմտահայերէն խօսողները, ապա արեւելահայերէնի կրողները շատ արագ դադարում են այն օգտագործել, մայրենին աստիճանաբար դուրս է գալիս գործածութիւնից, վտանգւում, հետզհետէ նեղանում են նրա կիրառութեան սահմանները:

Հայոց լեզուն դադարել է գործածուել մի շարք համայնքներում, նոյնիսկ՝ ներհամայնքային շփումներում, որոշ թեմերում էլ հոգեւորականները ստիպուած պատարագ են մատուցում նաեւ օտար լեզուով: Մայրենի լեզուով չխօսելը, չկարդալը, չստեղծագործելը, չմտածելն արդէն հայեցի լեզուամտածողութեան կորուստ է: Հայոց լեզուի մոռացութեան, հայ ինքնութեան կորստի դէմ պայքարն ու հայապահպանութեան խնդիրը դարձել են գրեթէ

բոլոր հայկական համայնքների առջեւ ծառացած առաւել լուրջ մարտահրաւէրները: Լեզուն է ժողովրդի գոյատեւման գլխաւոր պատուարը: Գրական արեւմտահայերէնը Ցեղասպանութիւնից յետոյ ստանձնել է հայ ժողովրդի ցրուած բեկորների ազգապահպանման առաքելութիւնը, սակայն այսօր այն գործածողները խիստ պակասել են: Այդ է պատճառը, որ ԵՈՒՆԵՍԿՕի կողմից արեւմտահայերէնը դասուել է «վտանգուած լեզուներ»ի շարքին:

Ամենամեծ, ամենաթանկ ժառանգութիւնը, որ ստացել ենք մեր պապերից, մեր լեզուն է: Լեզուն ազգային ինքնութեան պահպանման հիմքն է, իսկ լեզուի մոռացութիւնն ազգային ինքնութեան կորստի ուղիղ ճանապարհ է:

Համազգային խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտութիւն է Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան ջանքերի համախմբումը՝ մայրենիով հաղորդակցուելու, հայրենիքում մայրենին անաղարտ պահելու, պահպանելու եւ զարգացնելու, Սփիւռքում լեզուի եւ մշակոյթի, հայապահպանութեան, ազգային հոգեւոր-մշակութային արժէքները սերունդներին փոխանցելու ուղղութեամբ:

«*Սփիւռքի երիտասարդութիւնն օտար երկինքը սիրելուց զատ, պէտք է ճանաչի, մեծարի իր ազգութիւնը, իր պատմութիւնը, իր հայրենիքը, իր մշակոյթը, լեզուն՝ իր գիտելիքներն ու հնարաւորութիւնները ծառայեցնի, նախ եւ առաջ, ազգանպաստ ձեռնարկներին, մասնակցի ազգային շահի պաշտպանութեանը՝ լինի Սփիւռքում, թէ՝ հայրենիքում*»[5]:

Հայ երիտասարդութիւնը թրծուում է հայոց բանակում, կրթուում համալսարաններում, դառնում առաջադէմ եւ մրցունակ՝ գիտակրթական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում: Եւ այդ ներուժի ճիշտ ուղղորդումը, ինչպէս եւ սփիւռքահայ երիտասարդութեան հետ տարուող աշխատանքները կազմում են ՀՀ Սփիւռքի Նախարարութեան գործունէութեան առանցքային ուղղութիւններից մէկը: Նախարարութիւնը գերակայ խնդիր է հռչակել Սփիւռքում ուծացման դէմ պայքարին նոր թափի հաղորդումը՝ յատկապէս երիտասարդութեան շրջանում մայրենի լեզուի իմացութեան մակարդակի բարձրացման, երիտասարդական կազմակերպութիւնների ստեղծման ու զարգացման, Հայաստանի շուրջ նրանց համախմբման, հայրենիքում լեզուի արագացուած ուսուցում կազ-

մակերպելու, հայ ինքնաճանաչողական ծրագրեր իրականացնելու ճանապարհով:

ԼԵԶՈՒԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սասանւում են հայերէնի դիրքերը ընտանիքում. ներընտանեկան խօսակցական լեզուն յաճախ հայերէնը չէ: Առաւել մեծ չափեր է ընդգրկում հայերէնի անտեսումը խառնամուսնական ընտանիքներում:

Հայաստանի եւ հայ իրականութեան վերաբերեալ սփիւռքահայ երիտասարդներն ունեն ոչ-լիարժէք կամ սխալ պատկերացումներ, թերի տեղեկացուածութիւն:

Սփիւռք հեռարձակուող հաղորդումների որակն անբաւարար է, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն ուսումնական, մանկական, երիտասարդական գրաւիչ եւ հայերէնի իմացութեան համար խթանիչ ծրագրերի խիստ պակաս, մատուցուող լեզուի մաքրութեան խնդիր կայ, հաղորդավարական խօսքը յաճախ դժուարըմբռնելի է, ինչը խանգարում է հայերէնը չիմացող կամ վատ իմացող սփիւռքահային՝ լիարժէք հասկանալու մատուցուող տեղեկատուութիւնը:

Հանրային, ինչպէս նաեւ Սփիւռք հեռարձակուող միւս հեռուստատեսութիւնների ծրագրերում գրեթէ բացակայում են ուսումնական, կրթական, հայոց լեզուին նուիրուած երիտասարդական, մանկապատանեկան հաղորդումները:

Հայերէնի տարածմանն ու պահպանմանը մեծապէս խոչընդոտում են զանգուածային լրատուութեան միջոցների, գովազդների, համացանցային կայքերի կողմից հայերէնի աղճատումը, գրական արեւելահայերէնի աղաւաղումը, *ժարգոն*ի օգտագործումը:

ԱՌԱՋԱՐԿ-ԱՆԵԼԻՔՆԵՐ

Համաշխարհայնացման ներկայ դարում հայոց պետութեան եւ հայկական կառոյցների առջեւ ծառացած ամենամեծ հիմնախնդիրը հայ տեսակին ուծացումից փրկելն է: Այդ նպատակով հարկ ենք համարում մատնանշել, որ գործնական եւ որոշակի քայլեր կարող են ձեռնարկուել, եթէ կեանքի կոչուեն հետեւեալ ծրագրերը.-

ՀՀ կառավարութեան կողմից մշակել մայրենի լեզուի գործառութեան, կանոնակարգման, ուսումնասիրութեան ու պահպանման համապետական (համազգային) ծրագիր կամ լեզուաքաղաքականութեան հայեցակարգ եւ միջոցառումների ծրագիր, որի կազ-

մակերպական կառոյցը կը դառնայ ՀՀ կառավարութեանն առընթեր հայերէնի բարձրագոյն խորհրդի ստեղծումը՝ հայաստանեան եւ սփիւռքեան մասնագէտների ներգրաւմամբ:

Հայաստանում իրականացուող բոլոր երիտասարդական ծրագրերում ընդգրկել մայրենի լեզուի ուսուցումը, ընդլայնել ամառային դպրոցների ցանցը, բոլոր համայնքներում կազմակերպել ողիմպիականներ, փառատօներ, մրցոյթներ եւ վերջնական արդիւնքներն ամփոփել Հայաստանում:

Պատրաստել եւ Սփիւռքի համայնքներին, երիտասարդական կազմակերպութիւններին տրամադրել հայերէնի՝ որպէս երկրորդ, երրորդ լեզուի (այլ լեզուների հիմքով) ձեռնարկներ, ինքնուսոյցներ, զրուցարաններ, ստեղծել էլեկտրոնային դպրոց:

Ստեղծել եւ եթեր արձակել արեւելահայերէն եւ արեւմտահայերէն հեռուստահաղորդումներ, մայրենիի ընկերաբանական գովազդի փաթէթներ, *մուլտֆիլմ*եր, հայրենաճանաչութեանը միտուած հեռուստավաւերագրական ֆիլմեր:

Արեւմտահայերէնի պահպանումը, տարածումը եւ զարգացումը ՀՀ կառավարութեան կողմից հռչակել որպէս գերակայ խնդիր, այդ ուղղութեամբ մշակել համապատասխան ծրագրեր:

Օգտագործել արեւմտահայերէնը ԵՈՒՆԵՍԿՕի կողմից որպէս առանձնապէս վտանգուած լեզու ճանաչելու գործօնը՝ համատեղ (եւրոպական տարածքում) ծրագիր մշակելու, յատկապէս մասնագէտների պատրաստման, դասագրքերի տպագրութեան, լեզուի ուսուցման, արհեստագիտական միջոցների կատարելագործման տեսանկիւնից:

Աւելացնել ՀՀ Սփիւռքի Նախարարութեան էլեկտրոնային գրադարանի գիտահանրամատչելի, հայագիտական, ուսումնական, գեղարուեստական, մանկական գրականութեան, բաժինները, տեսագրութիւնները, մայրենիի ուսուցման էլեկտրոնային նիւթերը եւ համայնքներում տարածել տեղեկատուութիւն դրանցից օգտուելու վերաբերեալ, նաեւ ստեղծել հայալեզու էլեկտրոնային գրադարանների ցանց:

Իրականութիւն դարձնել ՀՀ նախագահի պատգամը՝ «*Տանը խօսենք հայերէն*»[6]:

Բոլոր ծրագրերի իրագործումը պահանջում է ՀՀ համապատասխան պետական մարմինների, Սփիւռքի հոգեւոր եւ համահայկական կառոյցների, համայնքային կազմակերպութիւնների, կրթո-

ջախների, մշակութային հաստատութիւնների, երիտասարդական եւ հասարակական այլ կազմակերպութիւնների, բարերարների, հայկական լրատուամիջոցների, ուսուցիչների, ծնողների համատեղ, նպատակասլաց եւ արդիւնաւէտ գործունէութիւն:

Բ) ԴՊՐՈՑԸ ՈՐՊԷՍ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՋԱԽ

Սփիւռքում հայ ինքնութեան, հայակերտումի եւ մարդակերտումի կարեւոր կենտրոնը եղել եւ մնում է դպրոցը: Այսօր Սփիւռքում գործում են մօտ 1000 ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցներ, որոնց պահպանութիւնը մեծ ջանքեր ու միջոցներ է պահանջում իւրաքանչիւր համայնքից: Ազգային դպրոցը ծանր օրեր է ապրում ամէնուր՝ ե՛ւ աւանդական, ե՛ւ նորագոյն Սփիւռքում: Դպրոցները գոյատեւում են հիմնականում Հայ Եկեղեցու, Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ռուսաստանի Հայերի Միութեան համայնքային կառոյցների եւ անհատ բարերարների շնորհիւ: Հայ դպրոցը հաւաքական ջանքերով պէտք է ապրի Սփիւռքում՝ դառնալով ուսուցման ժամանակակից մեթոդների եւ ձեւերի կրող: Ի տարբերութիւն օտար հասակակցի՝ հանգստեան օրերին եւս դպրոց յաճախելը (թէկուզ եւ՝ մայրենի լեզուն սովորելու նպատակով) հայ երեխայի համար կարող է անհանգստութեան եւ բարդութիւնների պատճառ դառնալ: Իսկ եթէ դպրոցում մայրենիի ուսուցումը հին մեթոդներով է իրականացւում եւ ձանձրալի է, ապա երեխան կամայ թէ ակամայ երես կը թեքի թէ՛ հայկական դպրոցից, թէ՛ մայրենի լեզուից: Ահա թէ ինչու պէտք է վերանայել մօտեցումները, հայկական այդ օջախները պէտք է կոչել «Մաշտոց» կենտրոններ, դրանց տալ մշակութային թեքում: Հայոց լեզուն, հայ երգը, պարը, արուեստը, քրիստոնէական դաստիարակութիւնը պէտք է կազմեն հայ դպրոցի հիմնական բովանդակութիւնը, որպէսզի դպրոցը գրաւիչ դառնայ:

Միջին Արեւելքից, նախկին խորհրդային երկրներից արտագաղթում է հիմնականում բարձրագոյն կրթութիւն ունեցող եւ տնտեսապէս ապահով խաւը, մինչդեռ մնացողները (կամ նրանք, ովքեր հնարաւորութիւն չունեն մեկնելու) յաճախ ցածր կրթական մակարդակ ունեն եւ տնտեսապէս ոչ-կայուն վիճակում են: Որպէս հետեւանք՝ հայկական կրթական հաստատութիւնների քանակը պակասում է, մշակութային ազդեցութիւնը (պար, երաժշտութիւն,

թատրոն, մամուլ) նուազում: Հայեցի կրթութեան որակի վրայ ազդում են ընտանիքների՝ յատկապէս հայ մօր կրթուածութեան եւ նրա՝ մայրենիի իմացութեան աստիճանը:

Վիճակագրական տուեալները վկայում են, որ մօր ազգային պատկանելութիւնն ազդում է նրա զաւակների ընկերաբանական ու մշակութային կարգավիճակի վրայ: Այն հայ աշակերտները, որոնց մայրերն օտարազգի են, շատ քիչ հայերէն են խօսում տանը (6.38%)՝ ի տարբերութիւն այն աշակերտների, որոնց մայրերը հայ են (տանը հայերէն խօսում է նրանց 80.14%ը): Այս հարցումներն արուել են Լիբանանում[7]:

Շատ հայեր, որոնք տնտեսապէս ապահով են, նախընտրում են իրենց զաւակներին ուղարկել ոչ-հայկական վարժարաններ՝ շեշտելով այդ վարժարաններում կրթութեան բարձր որակը: Վստահութեան նման կորուստն ունի տարբեր պատճառներ: Իրօք, շատ հայկական վարժարանների ուսուցիչների կրթական մակարդակը բարձր չէ, քանի որ կրթական աւելի բարձր մակարդակ ունեցող ուսուցիչը բարձր էլ վարձատրւում է, իսկ հայկական դպրոցներում ֆինանսական դժուարութիւնների պատճառով ներգրաււում են ցածր վարձատրուող ուսուցիչներ:

Դրամական դժուարութիւնները բարդութիւններ են առաջացնում մանկավարժների վերապատրաստման հարցում, որի բացակայութիւնը ծնում է զանազան բացասական երեւոյթներ՝ հայկական վարժարանների ուսուցման ոչ-պատշաճ որակ, ոչ-արդիական մեթոդներ եւ երեխաների պակաս ներգրաւուածութիւն:

Մեծ թուով հայկական վարժարաններում ուսուցման մեթոդները արդիական չեն, աւանդական են եւ ուսուցչակենտրոն: Բացակայում է բարձր արհեստագիտական միջոցների կիրառումը, կրթական ծրագրերը գրեթէ չեն բարեփոխուել:

Թէ՛ աշակերտների եւ թէ՛ նրանց ծնողների համար հայոց լեզուի եւ հայոց պատմութեան դասագրքերը յաճախ գրաւիչ չեն, ձանձրացնող են, ինչը հեռացնում է երեխային հայկականութիւնից: Հայաստանից ուղարկուած, հիմնականում Սփիւռքի դպրոցների համար ստեղծուած գրականութիւնն էլ շատ յաճախ ուսուցչի կողմից չի գործածւում. նախընտրութիւնը տրւում է տեղում ստեղծուած գրքերին:

Միւս կողմից, վերոյիշեալ հարցախոյզի արդիւնքներով, հայ աշակերտների միայն 38.13%ն է նախընտրում, որ իր ընկերը կամ

ընկերուհին հայ լինի, իսկ 3.13%ը նախընտրում է, որ նա լինի ոչ-հայ: Հարցուածների 58.75%ի՝ այսինքն՝ կէսից աւելիի համար ընկեր-ընկերուհու ազգային պատկանելութիւնը կարեւոր չէ (եւ սա՝ հայութեան կենտրոն Լիբանանում)[8]:

Այս բոլորի հետ մէկտեղ՝ հետաքրքրական է Ֆրանսիայի օրինակը, որտեղ գործում է 7 հայկական ամէնօրեայ դպրոց: Մարսէյի դպրոցն իր 1247 աշակերտով համարւում է Ֆրանսիայի ամենաառաջաւոր դպրոցներից մէկը, քանի որ 4300 դպրոցների ցանկում գրաւում է 33րդ տեղը: Եւ դա այն դէպքում, երբ Ֆրանսիայում գործող այլ համայնքների 300 դպրոցներից (ունեն 60.000 աշակերտ) միքանիսն են, որ գրաւում են 100-180րդ տեղերը: Հետեւաբար, հայ համայնքների կողմից տարուող ճիշտ կրթական քաղաքականութեան, նոր մեթոդների կիրառման արդիւնքում հնարաւոր է ունենալ առաջաւոր եւ որակեալ դպրոց, նաեւ հայկական միջավայրը եւ հայկական հանրութիւնը պարարտ հող են հայոց լեզուն օգտագործելու, հայկական մտածողութիւն ձեւաւորելու համար:

Սփիւռքում գործող ամէնօրեայ դպրոցները կրթական երեք աստիճան ունեն.-

Նախակրթարան՝ 1-6րդ դասարաններ, համապատասխանում է ՀՀ տարրական դպրոցին,

Միջնակարգ (հիմնական դպրոց)՝ համապատասխանում է հանրակրթական դպրոցին (Մերձաւոր սփիւռք՝ Վրաստան, Աբխազիա եւն.),

Երկրորդական (ազգային ամէնօրեայ վարժարաններ)՝ համապատասխանում է աւագ դպրոցին:

Հայկական ամէնօրեայ դպրոցների ամենակարեւոր առանձնայատկութիւնն այն է, որ երեխաները սովորում են նաեւ հայագիտական առարկաներ՝ հայոց լեզու եւ գրականութիւն, հայ ժողովրդի եւ հայ եկեղեցու պատմութիւն, հայկական երգ ու պար, հայ մշակոյթ: Խիստ կարեւոր է նաեւ այդ դպրոցներում ձեւաւորուած հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան մթնոլորտը, որի շնորհիւ հայ երեխաների մէջ արմատաւորւում է ազգային ինքնագիտակցութիւն, կապ՝ ազգային արմատների, հոգեւոր-մշակութային արժէքների հետ: Բնականաբար, կայ էական տարբերութիւն ազգային ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցների միջեւ:

Երկրների քաղաքական իրավիճակների բերմամբ կրթօջախների կարգավիճակը կարող է փոփոխուել: Սիրիական պատերազմի

պատճառով ազգային դպրոցները մեծ կորուստներ են կրել: Սակայն մայր համայնքի հայութեան, հայկական կազմակերպութիւնների, հոգեւոր կառոյցների, հայկական դպրոցների հայ մանկավարժների հերոսական ջանքերի շնորհիւ Սիրիայում, նոյնիսկ պատերազմի պայմաններում, շարունակում են գործել 28 դպրոցներ:

Այսօր Սփիւռքում գործում են մօտ 350 ամէնօրեայ եւ 600 միօրեայ դպրոցներ, կրթական հաստատութիւններ, խմբեր, խմբակներ, դասընթացներ:

Սփիւռքի հասարակական կեանքում էապէս մեծացել է գրական արեւելահայերէնի գործառութեան տիրոյթը: Սակայն շատ երկրների (Արեւելեան Եւրոպայի, ԱՊՀի՝ Ռուսաստան (ՌԴ), միջինասիական պետութիւններ) հայկական համայնքներում արեւելահայերէնով խօսող դպրոցահասակ երեխաների համար չկան նոյնիսկ միօրեայ դպրոցներ: Տարբեր երկրներում ձեւաւորուած նոր համայնքների մեծ մասը դպրոցներ հիմնելու հարցում հանդիպում է լուրջ դժուարութիւնների:

Թէեւ Սփիւռքի արեւմտահայերէն խօսող հատուածի համեմատ արեւելահայերէն խօսող հատուածն աւելի մեծաքանակ է, սակայն վերջիններիս շատ աւելի փոքր տոկոսն է յաճախում հայկական դպրոցներ: 7 մլն. հայերից արեւմտահայերէն է խօսում շուրջ 2 մլն. մարդ, որոնցից հայկական ամէնօրեայ, միօրեայ դպրոցներում սովորում է 170.000 աշակերտ, իսկ 5 մլն. արեւելահայերէն խօսող հատուածից՝ 150.000-200.000 աշակերտ, որը կազմում է արեւելահայերէն խօսող բնակչութեան ընդամէնը 2.6-3.0%ը[9]: 2009-2016՝ միօրեայ դպրոցների թուի աւելացմամբ՝ աշակերտների թիւն աւելացել է 80.000-100.000ով:

Յետխորհրդային երկրներում շատ քիչ են հայկական դպրոցները: Պատճառը համայնքների ոչ-բաւարար կազմակերպուածութիւնն է, դրամական միջոցների, իսկ որոշ դէպքերում՝ մանկավարժների բացակայութիւնը: Նոր ձեւաւորուող համայնքների հազարաւոր հայ երեխաներ հնարաւորութիւն չունեն ուսանելու հայկական դպրոցներում: ՌԴի՝ նախկինում հայկական բնակչութեամբ համախումբ շրջաններում (Ռոստովի Մարզի Միասնիկեանի Շրջան, Կրասնոդար, Ստաւրոպոլի երկրամասեր, Ադլէր քաղաք) գործող հանրակրթական դպրոցներում հայագիտական առարկաներից այսօր հայերէն լեզուով դասաւանդւում են միայն հայոց լեզու եւ հայոց պատմութիւն, այն էլ՝ լրացուցիչ պարապմունքների

ձեւով: Մինչդեռ այդ դպրոցներում խորհրդային տարիներին ամբողջ ուսումնական ծրագիրը հայերէն էր իրականացւում: Որոշ դպրոցներում ազգային կրթութեան բաղադրիչ է համարւում երգի, պարի, թատերական խմբակների գործունէութիւնը:

Որոշ միօրեայ դպրոցներ չեն դառնում մշտական գործող կրթօջախներ, հիմնադրւում եւ փակւում են: Օրինակ, ՌԴի հարաւում, երկրի տարբեր տարածաշրջաններում հիմնուած հայկական կիրակնօրեայ դպրոցների որոշ մասը փակուել է, միքանի տարի յետոյ՝ վերաբացուել: Բարեբախտաբար վերջին տարիներին վերաբացուեցին մէկ տասնեակ դպրոցներ:

Այնուամենայնիւ, ՌԴում, յատկապէս ինքնակազմակերպուած համայնքներում, միօրեայ դպրոցներ բացւում են. մեր ունեցած տուեալներով՝ միայն 2009-2016՝ աւելի քան 200 միօրեայ դպրոցներ, հայոց լեզուի դասընթացներ, խմբեր, խմբակներ են հիմնուել: Միքանի միօրեայ դպրոցներ են ստեղծուել նաեւ եւրոպական երկրներում:

Հայեցի կրթութիւն տալու, հայապահպանութեան գործում Սփիւռքում կարեւոր եւ անմնացորդ աշխատանք են կատարում մի շարք նշանաւոր հաստատութիւններ եւ ուսումնական կենտրոններ:

1821ին հիմնուած Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը այսօր շարունակում է գործել որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դպրոց, որտեղ հոգեւոր կրթութիւն են ստանում սաներ Հայաստանից եւ Մերձաւոր ու Միջին Արեւելքից (աշակերտների զգալի մասը Իրանի հայկական համայնքներից է)[10]:

Լիբանանում 1955ին հիմնուած Հայկազեան Համալսարանում ուսումնառութիւնը կազմակերպւում է անգլերէն լեզուով, սակայն հայկական մշակոյթին վերաբերող դասընթացները աւանդւում են հայոց լեզուով: Համալսարանն ունի նաեւ Մերձաւոր Արեւելքի համայնքները հայ մանկավարժներով ապահովելու նպատակ: Համալսարանն ունի հայոց լեզուի բաժանմունք: Համալսարանը կարեւոր գործունէութիւն է ծաւալում հայերէնի, մասնաւորապէս՝ արեւմտահայերէնի պահպանման, տարածման, քարոզչութեան եւ լեզուագիտական ուսումնասիրութիւնների կատարման ուղղութեամբ[11]:

Սերտ է Հայկազեան Համալսարանի գործակցութիւնը հայրենիքի հետ. համալսարանն աշխուժօրէն գործակցում է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան եւ հայրենի գիտական, կրթական հաստատութիւնների, մասնաւորապէս՝ ՀՀ ԳԱԱի եւ ԵՊՀի հետ. Կազմակեր-

պուել են տարբեր թեմաներով մի շարք գիտաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ, կեանքի կոչուել զանազան ձեռնարկներ:

Աշխարհի լաւագոյն կրթական հաստատութիւնների հետ համատեղ իրականացուող բազմաթիւ նախաձեռնութիւններ կամրջում են առաջատար գիտելիքի կենտրոնները Հայաստանի հետ, օրինակ՝ Մասաչուսէցի Տեխնոլոգիական Համալսարանի «Գլոբալ ուսումնական լաբորատորիա» ծրագիրը Հայաստանում: Նմանօրինակ ծրագրեր են իրականացուում նաեւ աշխարհի այլ առաջատար համալսարանների հետ:

Լեզուապահպանման կենտրոններ են գործում Իտալիայում, Փարիզում, տարբեր երկրների համալսարաններում, որոնցում հայերէնի ուսուցման, հայոց լեզուի հիմնախնդիրների հետազօտութեան ուղղութեամբ նշանակալի գործունէութիւն են ծաւալում հայագիտական ամբիոնները, կենտրոնները, ծրագրերը: Կարեւոր աշխատանքներ է կատարում յատկապէս Կալիֆորնիա Նահանգում գործող ԱՐՓԱ Ինստիտուտը, որը Հայաստանի ուսանողների համար ամէնամեայ նորարարութեան մրցանակաբաշխութիւններ է անցկացնում՝ նպատակ ունենալով խրախուսել ուսանողներին եւ ասպիրանտներին՝ ըստ գիտութեան տարբեր բնագաւառների: Վերջին տարիներին ԱՐՓԱն որպէս գործունէութեան կարեւոր ուղղութիւն է որդեգրել արեւմտահայերէնի հիմնախնդիրներին նուիրուած գիտաժողովների, համաժողովների անցկացումը, որոնց ընթացքում լեզուաբանները, մանկավարժները քննարկում են լեզուի, քերականութեան կանոնակարգման, դասագրքերի ստեղծմանն ուղղուած խնդիրներ եւ առաջարկում լուծումներ[12]:

Հայագիտական գիտաժողովների, հրատարակութիւնների, հայալեզու ձեռնարկների հովանաւորութիւնն է ստանձնել նաեւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը:

Աշխատանքներից անմասն չէ նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը, որը պետական եւ մասնաւոր ծրագրերով նպաստում է Սփիւռքում հայկական ուսումնական հաստատութիւնների կայացմանն ու զարգացմանը: Դեռեւս 2008ին, նորաստեղծ Սփիւռքի Նախարարութեան առաջին նախաձեռնութիւնը եղաւ ԵՊՀում Սփիւռքագիտութեան Ամբիոնի հիմնումը, իսկ 2009ին, նախարարութեան աջակցութեամբ ՀՀ ԳԱԱի 6 ինստիտուտներում ձեւաւորուեցին Սփիւռքի բաժիններ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հայկական դպրոցներում աշակերտների թիւը գնալով նուազում է: Կան փակուող դպրոցներ, խնդրայարոյց են մնում ուսման որակի հարցերը, ուսուցիչների սերնդափոխութեան խնդիրն օրակարգային է:

Սփիւռքեան կառոյցները հետաքրքրուած չեն կարողանում Հայաստանի Հանրապետութեան կողմից հայագիտական առարկաների ուսուցիչների պատրաստման համար յատկացուած 70 անվճար բուհական տեղերի համար թեկնածուներ գտնել:

Դպրոցների մի մասը չի մասնակցում Հայաստանի Հանրապետութիւնում սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին: Շատ հայկական համայնքներ չունեն միջոցներ այդ դասընթացներին իրենց ուսուցիչների մասնակցութիւնն ապահովելու համար, ինչի արդիւնքում տուժում է ուսուցման որակը եւ կրթական ոլորտի նորութիւնների կիրառումը դպրոցներում:

Որոշակի տեղաշարժեր կան Սփիւռքի համար համացանցային կրթական ծրագրերի իրականացման ուղղութեամբ, սակայն առցանց ուսուցումն անհրաժեշտ զարգացում չի ունենում:

«*Կրթութեան խնդիրը միշտ արդիական է, իսկ մեր ժողովրդի համար հայապահպանութեան լոյսի ներքոյ՝ կենսականօրէն կարեւոր: Տարբեր մշակոյթների ու տարբեր արժէհամակարգերի պայմաններում հասակ առնող եւ յաճախ ժամանակակից աշխարհի անցանկալի ընթացքների ազդեցութիւններին ենթարկուող հայորդեաց համար ինքնութեան պահպանութեան պայման ու ապահով յենարան է հայրենաճանաչութիւնը, քրիստոնէական մեր հաւատքին ու արժէքներին, մեր ազգային աւանդներին խարսխուած որակեալ կրթութիւնը: Այս կերպով մեր ընտանիքներում, մեր եկեղեցիներում, ազգային ու կրթական մեր հաստատութիւններում կարող պիտի լինենք կերտել Աստծոյ, Ազգի, Հայրենիքի ու Եկեղեցու առջեւ պատասխանատուութիւն կրող երիտասարդութիւն: Ամէնքս պիտի գործենք Հայրենիքի ու Եկեղեցու շուրջ մեր զաւակների համախմբման նախանձախնդրութեամբ, մեր հաւատքը, մեր լեզուն ու մշակոյթը սրբօրէն պահպանելու եւ սերնդէսերունդ փոխանցելու կամքով:*

Ազգապահպանութեան, հայրենաշինութեան եւ ազգային մեր խնդիրների լուծման նախադրեալը մեր համագործակցութիւնն ու քրտնաջան աշխատանքն է, մեր միասնականութիւնն ու կազմա-

կերպուածութիւնը»՝ նշել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ն 2011ի Հայաստան-Սփիւռք չորրորդ համաժողովի ընթացքում[13]:

ԱՌԱՋԱՐԿ-ԱՆԵԼԻՔՆԵՐ

Ելնելով վերոնշեալից՝ ակնյայտ է, որ ոլորտում ստեղծուած իրավիճակը հնարաւոր է շտկել միայն հայոց կառավարութեան եւ սփիւռքեան կազմակերպութիւնների, յատկապէս Հայ Եկեղեցու եւ համահայկական կառոյցների սերտ համագործակցութեամբ:

Հաշուի առնելով Սփիւռքի ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցների առանձնայատկութիւնները՝ ՀՀ կառավարութեան նախաձեռնութեամբ անհրաժեշտ է.

ա) մշակել մայրենիի ուսուցման հեշտացուած մեթոդներ տարբեր տարիքային խմբերի ու մակարդակների համար, իրականացնել ուսուցման, վերապատրաստման եւ կատարելագործման ծրագրեր՝ ըստ տարածաշրջանների, պատրաստել հայոց պատմութեան, Հայ Եկեղեցու պատմութեան, հայ գրականութեան եւ հայագիտական այլ առարկաների ուսուցման միասնական մեթոդական ծրագրեր, քննարկել նոր դասագրքերի ստեղծման հարցերը.

բ) շարունակել պետութեան կողմից համայնքային դպրոցներին դասագրքերի, ուսումնաօժանդակ նիւթերի եւ մեթոդական ցուցումների մատակարարումը՝ ըստ դպրոցների պահանջարկի:

Հաշուի առնելով իւրաքանչիւր երկրի առանձնայատկութիւնները՝ համայնքային կառոյցների եւ համահայկական կազմակերպութիւնների ջանքերով մշակել համայնքի կրթական քաղաքականութեան իրականացման ծրագիր եւ քննարկել տարածաշրջանային կրթական հիմնադրամներ ստեղծելու հարցը:

Երաշխաւորել՝ ստեղծելու մշտական գործող տարածաշրջանային կրթական յանձնախմբեր, հայ ուսուցիչների միութիւններ, որոնք կ'աշխատեն հայկական դպրոցների, կրթական խորհուրդների, համայնքների կրթական խնդիրների լուծման, Հայաստանի Հանրապետութեան եւ այլ համայնքների կրթական հաստատութիւնների հետ կապերի հաստատման, զարգացման ուղղութեամբ:

Համատեղ ուժերով հասնել նրան, որ.-

1) հայաշատ երկրներում օրէնսդրօրէն երաշխաւորուի հայերէնը կրթական պետական ծրագրերում ներառելու հարցը (պարտադիր կամ լրացուցիչ դասընթացի տեսքով), ինչպէս

իրականացուում է ԱՄՆի Գլենդէյլ քաղաքում, Շուեդիայում, Շուէյցարիայում, Ուկրաինայում, ՌԴ մի շարք տարածքներում.

2) տեղի պետական դպրոցներում կազմակերպուի հայերէնի՝ որպէս լրացուցիչ կրթութեան առարկայի ուսուցում (ԱՄՆի՝ «Դաւթեան-Մարիամեան» կրթական հաստատութիւնը հանրային 30 դպրոցներում կազմակերպում է շաբաթօրեայ, կիրակնօրեայ դասընթացներ, նման ուսուցում կայ նաեւ ՌԴ որոշ բնակավայրերում).
3) Գործարկել նոր կառուցակարգեր, որոնք կը նպաստեն սփիւռքահայ աշակերտների՝ հայագիտական գիտելիքների մակարդակի բարձրացմանը, անցկացնել նաեւ հայագիտական եւ բնագիտական առարկաներից տարածաշրջանային ողիմպիականներ՝ դրանով իսկ ապահովելով Սփիւռքի կրթօջախների միջեւ հորիզոնական կապերի ստեղծումը, համախմբելով տուեալ տարածաշրջանի կրթական գործի մասնագէտներին: ՀՀ կառավարութեան աջակցութեամբ հայկական բոլոր կառոյցներին երաշխաւորել ստեղծելու կիրակնօրեայ դպրոցներ՝ «Մաշտոց» կենտրոններ, ունենալով ազգային երգի, պարի, մշակութային այլ խմբակներ.
4) Հայաստանեան բուհերում կազմակերպել այլ երկրների առաջնակարգ համալսարաններում դասաւանդող յայտնի պրոֆեսորների դասախօսութիւններ, դասընթացներ, յատկապէս այն մասնագիտութիւնների եւ մասնագիտացումների գծով, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետութեան զարգացմանը: Խթանել ՀՀ բուհերում Սփիւռքի ուսանողների թուաքանակի աւելացմանը.
5) Պետականօրէն շարունակել ուսուցիչների պատրաստման եւ վերապատրաստման աշխատանքները Հայաստանում եւ Սփիւռքում՝ ներգրաւելով նոր ուժեր եւ աղբիւրներ.
6) ՀԲԸՄ Վիրտուալ Քոլէջի հիմքի վրայ ստեղծել «էլեկտրոնային դպրոց», որը հասանելի կը լինի իւրաքանչիւր տարիքի եւ իւրաքանչիւր երկրում ապրող հայի: Օգտագործելով ժամանակակից տեղեկատուական արհեստագիտական միջոցների հնարաւորութիւնները՝ կազմակերպել հեռավար ուսուցում օտար լեզուների հիմքով: Մշակել հայերէն եւ օտար լեզուներով յատուկ ծրագրեր՝ համացանցի միջոցով նոր սերնդին մատչելի դարձնելով հայկական նորութիւնները, ապահովելով հայոց լեզուի ուսուցում.

7) ՀՀ ԳԱԱի, ՀԲԸՄի, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան ուժերի համախմբմամբ ստեղծել արեւմտահայերէնի-արեւելահայերէնի միասնական դասագրքեր՝ հայերէնը որպէս օտար լեզու ուսուցանելու մեթոդաբանութեամբ: Շարունակել ՀՀ ԳԱԱում ստեղծուած՝ լեզուի երկու ճիւղերի մերձեցման ուղիները հետազօտող եւ արեւմտահայերէնի բառարանների, դասագրքերի ստեղծման ուղղութեամբ աշխատող խմբերի գործունէութիւնը, մինչեւ 2020 աւարտել արեւմտահայերէնի միասնական դասագրքերի ստեղծման աշխատանքները:

Գ) ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ

Հայ ընտանիքը հայ ինքնութեան պահպանման գլխաւոր պատուարն է: Ընտանիքն է երեխայի առաջին դաստիարակը, լեզուի, աւանդոյթների ու սովորոյթների կրողն ու պահպանողը եւ սերնդէսերունդ փոխանցողը: Հայ ընտանիքը նաեւ իւրօրինակ պատնէշ է ազգային եւ օտար մշակոյթների միջեւ, ուծացման սպառնալիքի դէմ: Հայ ընտանիքով է պայմանաւորուած հայերի վիճակն աշխարհում: Պատահական չէ, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ն, խօսելով ընտանիքի կարեւորութեան մասին, նշել է. «*Դարերի ընթացքին մեր պատմութեան մահաբեր հողմերին ու խորշակներին յանդիման կանգուն ենք մնացել հաւատաւոր կեանքով հայ ընտանիքի: Եկեղեցիացած մեր փոքրիկ տունն է հայ ընտանիքը... Հայ ընտանիքը փոքրիկ հայրենիք է, ուր ապրում են նախնեաց յիշատակները, եւ անկորուստ պահպանւում հայրենի ժառանգութիւնը, ուր երջանիկ է եւ յաւերժում է հայ ոգին*»[14], իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ը, 2004ը հռչակելով «Հայ Ընտանիքի Տարի», *նշել է՝* «*Մեր ազգին, մեր եկեղեցւոյ, մեր գաղութներուն, մեր կառոյցներուն հիմքը, ամէն իմաստով, ընտանիքն է*»[15]:

«Ես ծագումով հայ եմ», «Իմ տատը կամ պապը հայ են եղել», «Ծնողքս հայ էին» արտայայտութիւնները ցաւալի իրողութիւններ են, որոնք վկայում են ընտանեկան աւանդոյթների, ընտանեկան կապերի քայքայման, ազգային ինքնութեան աղաւաղման մասին: Հայ ինքնութեան պահպանման վրայ որքանո՞վ է ազդում ընտանիքը, որո՞նք են հայրենիքի եւ սփիւռքեան կառոյցների դերակատարութիւնն այս ուղղութեամբ, ի՞նչ նոր հնարաւորութիւններ կան: Այս եւ բազում այլ հարցեր պատասխանի կարիք ունեն:

Հայ ինքնութեան, մասնաւորապէս՝ հայ ընտանիքի ազգային դիմագծի վրայ ազդող գործօններից են օրէցօր աւելացող խառնամուսնութիւնները, որոնք դարձել են համաշխարհայնացման ակնյայտ դրսեւորումներից մէկը: Այսօր արդէն անհերքելի իրողութիւն է, որ սփիւռքեան իրականութեան մէջ գնալով պակասում են զուտ հայկական ընտանիքները: Լատինական Ամերիկայի երկրներում ապրող հայութեան շրջանում խառնամուսնութիւնները կազմում են մօտաւորապէս 70-80%, Հիւսիսային Ամերիկայում՝ մօտաւորապէս 60%: Սովորական են դարձել խառնամուսնութիւնները յատկապէս ԱՊՀ երկրների տարածքում, քանի որ դրանց նպաստում են առաւելապէս քրիստոնէական միջավայրը, լեզուն, կրթական, մշակութային նմանութիւնները: Փաստ է, որ ուծացման գործընթացն առաւել արագ է տեղի ունենում քրիստոնէական միջավայրում[16]:

Սակայն ամուսնութիւնները շատացել են նաեւ մահմեդականների հետ: Եթէ մօտ մէկ դար բաւականին «պաշտպանուած» էր Միջին Արեւելքը, ապա այսօր այստեղ եւս Հայ Եկեղեցին հաստատում է խառնամուսնութիւնների աւելացում: Անհրաժեշտ է նման ընտանիքների երեխաներին հնարաւորինս ամուր շաղկապել հայկական մշակոյթին, հայկական հաւատքին, հայրենիքին: Հարկաւոր է միջոցներ ձեռնարկել՝ հայ գէնը զօրացնելու համար: Այստեղ անելիք ունեն նաեւ Սփիւռքի կառոյցներն ու կազմակերպութիւնները, որոնք ջանքեր պէտք է գործադրեն խառնամուսնական ընտանիքների երեխաներին հայկական համայնքային կեանքին համակցելու, նրանց ազգային արժէքներով դաստիարակելու ուղղութեամբ, նրանց գերակշռող մասին Սփիւռքի Նախարարութեան ձեռնարկներին, ՀՀում իրականացուող ծրագրերին մասնակից դարձնելու համար:

Խառնամուսնական ընտանիքում դժուարին ու բարդ վիճակում է յայտնւում երեխան: Նման երեխաների խնդրին է անդրադառնում յայտնի գրող Լեւոն Շանթը, նշելով՝ «*Եւ ամէնէն դժբախտը խառնազգի ամուսնութիւններուն մէջ՝ տիրող ու հպատակ ազգերու միջեւ կայացածն է, որովհետեւ տիրողի արհամարհանքը, մեծամտութիւնը ու վերէն նայիլը, ինչպէս եւ տիրուածի վիրաւոր, բողոքող ու խայթող հոգին յաճախ կը բախին իրարու ընտանեկան սեղանին վրայ…: Եւ այս տեսակի յարկի մը տակ մեծցող սերունդը երկկենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրայ միաժամանակ*

ապրող, բայց ոչ ջուրին մէջ լողալ գիտէ, ոչ ցամաքի վրայ մարդավարի քալել. եւ յաճախ կը վերջանայ անով, որ ջուրն ալ կ'ապէ, ցամաքն ալ, թէեւ իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կը մնայ միշտ վառ՝ կամ ջուրինը ըլլալու, կամ ցամաքինը»[17]:

Իրաւամբ խառնամուսնութիւններից ծնուած երեխան իր ինքնահաստատման, ինքնաճանաչողութեան ամբողջ գործընթացում երկընտրանքի առաջ է. ո՞րն ընտրել: Հարց է առաջանում, թէ ի՞նչ արժէհամակարգով է երեխան մեծանալու: Սա ամենադժուար խնդիրն է, որի լուծումը ենթադրում է իրար հետ շաղկապուած մի շարք հարցերի պատասխան. արդեօք երեխան կը սովորի՞ հայերէն, կը դաւանի՞ Հայ Եկեղեցուն, կը կապուի՞ հայկական համայնքի հետ, կ'ընկալի՞, կ'ընդունի՞ իր հայ լինելը, իրեն հայ կը զգա՞յ, կը հասկանա՞յ, իրենը կը համարի՞ հայկական մշակոյթը[18]: Եւ, վերջապէս, երեխան արդեօք ցանկութիւն կ'ունենա՞յ երբեւէ այցելել իր հայ մօր կամ հօր պատմական հայրենիք:

Եթէ կարողանանք նման երեխայի գիտակցութեանը հասցնել իր հայ լինելը, ըստ հնարաւորին օգնել՝ ձեռք բերելու հայկական ինքնութեան տարրեր, կը նպաստենք այդ խնդրի դրական լուծմանը՝ երեխայի հայ ինքնութեան պահպանմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է նրան ներգրաւել համայնքային կեանքի մէջ, հնարաւորութիւն ստեղծել՝ մեծանալու հայկական ազգային միջավայրում: Կարծում ենք՝ դա կը լինի կարեւորագոյն քայլ: Միասնական ջանքերով պահենք եւ պահպանենք հայ ընտանիքը, փրկենք այն տարբեր ազդեցութիւններից:

Դ) ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Հայութեանը միաւորող իւրօրինակ գործօն են նաեւ ազգանունը եւ անունը, որոնք ինքնութեան վկայութիւններ են, հանդէս են գալիս միասնական ձեւով եւ յատկապէս օտարութեան մէջ ապրող մարդու ինքնութեան ամրապնդման միջոց են, նրա ազգային հոգեւոր անձնագիրը:

«*...ամէն ազգի անուն*
Իր տարազն է, իր մայր լեզուն...»[19]:

Ցաւօք շիրազեան տագնապներն անուն-ազգանունների օտարացման առումով այսօր իրականութիւն են դարձել: Ճակատագրի բերումով յատկապէս Թուրքիայում հայերի զգալի մասը 1937ից զրկուել է հայկական ազգանուններից, կորցրել հայ ինքնութիւնը

հաստատող էական «եան»ը, սակայն կան պարագաներ, երբ անձն ինքնակամ է կորցնում այն: Օտարամոլութիւնը շատ արագ է թափանցում հայ ընտանիքներ, եւ ոչ միայն Սփիւռքում, այլեւ Հայաստանում շատ են օտարահունչ անունները:

Ընտանիքի գլխաւոր ժառանգութիւնը սերնդէսերունդ փոխանցւում է ազգանուան հիմքով: Անունների եւ ազգանունների աղաւաղումը ինքնութիւնից հեռացման վտանգաւոր քայլեր են: Յաճախ նորաոճութեանը տուրք տալով՝ երիտասարդ ընտանիքները խորապէս չեն գիտակցում, որ երեխայի անունն ընտրելիս, ազգանունը փոխելիս է սկսւում հայութիւնից հեռանալու առաջին քայլը:

Հայկական աւանդոյթները պահպանող լիբանանեան համայնքում կատարուած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ հայ աշակերտների 56.88%ը կրում է հայկական, 31.19%ը՝ արեւմտեան, իսկ 10.94%ը՝ արաբական անուններ: Մանկութեան շրջանում երեխային շրջապատից չտարբերելու ծնողների ձգտումը երեխային հեռացնում է իր արմատներից: Հայեցի անուն-ազգանունների պահպանման հարցում հայկական կառոյցները, Եկեղեցին պէտք է վճռական լինեն:

Ե) ՄՇԱԿՈՅԹԻ ԴԵՐԸ

Համաշխարհայնացման պայմաններում ազգային ինքնութեան պահպանման գործում կարեւորագոյն յանձնառութիւն ունի հայկական մշակոյթը, որը կամրջում է ազգի անցեալը, ներկան ու ապագան: Հայ ժողովուրդը հնագոյն քաղաքակրթութեան կրող է, ստեղծել է հարուստ մշակութային ժառանգութիւն, որի պահպանումն օգնում է յաղթահարել հայ ազգային ինքնութեանը սպառնացող բազում մարտահրաւէրներ: Սփիւռքում ազգային երգ ու պարով, ազգային ժառանգութեամբ կարելի է երիտասարդութեան մէջ վառ պահել հայ ինքնութիւնը եւ փրկել ուծացումից:

Սփիւռքեան համայնքներում այսօր գործող հարիւրաւոր երգի, պարի խմբերը մեծ դեր ունեն. դրանք հայապահպանութեան հզօր կենտրոններ են դարձել: Հայաստանից հայ արուեստագէտների՝ համայնքներում պարբերաբար կազմակերպուող համերգերն անմոռանալի հետք են թողնում, փոթորկում հայերի հոգիները եւ արթնացնում ու ամրապնդում հայութեանը պատկանելու գիտակցութիւնը: Անշուշտ, կառոյցների գլխաւոր խնդիրը պէտք է լինի ՀՀ Սփիւռքի եւ Մշակոյթի նախարարութիւնների հետ

համատեղ ծրագրուած եւ հետեւողականօրէն Սփիւռքում որակեալ արուեստ ներկայացնելը: Անհրաժեշտ է համերգերին մասնակից դարձնել տաղանդաւոր երգիչների, դերասանների, որպէսզի արդիւնքը գոհացուցիչ լինի, հանդիսատեսը գեղագիտական հաճոյք ստանայ եւ հպարտանայ իր հայ լինելու համար: Մշակոյթով պէտք է օգնել՝ համայնքներում հաստատելու համերաշխութիւն: Համերաշխութեամբ եւ պատմական յիշողութեամբ է, որ կարող ենք ինքնութիւնը պահել, միմեանց հետ կապն ամրապնդել:

Մշակութային բազմազանութիւնը հանրահռչակելով որպէս զարգացման շարժիչ ուժ եւ առաջատար միջոց ոչ միայն տնտեսական աճի, այլեւ լիարժէք մտաւոր, յուզական, բարոյական եւ հոգեւոր կեանքի վերելքի համար՝ ԵՈՒՆԵՍԿՕն հռչակել է՝ «*Մշակութային ժառանգութիւնը մեր ժառանգութիւնն է անցեալից, այն, ինչով մենք ապրում ենք այսօր, եւ այն, ինչ մենք պէտք է փոխանցենք ապագայ սերունդներին: Մեր մշակութային եւ բնական ժառանգութիւնը կեանքի եւ ոգեշնչման անփոխարինելի աղբիւրներ են*»[20]:

Զ) ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

Հայ ինքնութեան պահպանման գրաւականներից է պատկանելութիւնը Հայ Եկեղեցուն: Մեր Եկեղեցին դարեր շարունակ եղել է հաւատքը եւ ազգային արժէքները պահպանողն ու սերունդներին փոխանցողը, Սփիւռքում ազգային ինքնութեան եւ հայապահպանութեան գլխաւոր պատուարը, որն օտար ափերում դեգերող հայի համար ինչ-որ առումով եղել է նաեւ երազ-հայրենիքի իրական ներկայութիւն: Եկեղեցու կողմից իրականացուող արարողութիւնները, ձեռնարկները նպաստում են ազգային ինքնութեան պահպանմանը՝ ժողովրդական հանգուցային կերպարների եւ ազգային տօնական օրերի ընկալումների ամրապնդմամբ ու վերակենդանացմամբ: Այսօր առաւել կարեւորւում են Հայ Եկեղեցու միասնականութեան, համախմբուածութեան, հասարակական կեանքում հեղինակութեան բարձրացման եւ ամրապնդման հարցերը, քանզի այն հիմնարար առաքելութիւն ունի ազգի պահպանման, զարգացման, նրա ապագայի հարցում: Հետեւաբար, պետութիւնը եւ սփիւռքեան կառոյցները, գործակցելով Հայ Եկեղեցու հետ, պէտք է կարողանան հայ երիտասարդութեան մէջ վառ պահել հայկական արմատներին հաւատարիմ մնալու գաղափարը,

պատմական յիշողութիւնը, ինչպէս նաեւ ամէն կերպ նպաստել Հայ Եկեղեցու հեղինակութեան եւ դերակատարութեան բարձրացմանը:

ՀՀ սահմանադրութեան համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպէս ազգային Եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում*»[21]: Հայոց Եկեղեցին հին ժամանակներից սկսած՝ լայնախոհութիւն է ցուցաբերել միջեկեղեցական յարաբերութիւններում. իբրեւ ազգային եկեղեցի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութիւնների միասնութեամբ մեծ առաքելութիւն է ունեցել Սփիւռքի համայնքներում՝ ակնյայտ ազդեցութիւն ունենալով հայ ժողովրդի հոգեւոր եւ ազգային մշակոյթի զարգացման ու ազգային ինքնութեան պահպանման գործում:

Փորձը ցոյց է տալիս, որ Սփիւռքի եւ Հայաստանի հայութիւնը միակամ է դառնում համահայկական հարցերի բարձրացման եւ վտանգի դէպքում: Մի կողմ թողնելով դաւանանքային տարակարծութիւնները՝ Հայ Եկեղեցին եւս միասնական ճակատով է հանդէս գալիս ընդդէմ հակառակորդի, Հայ Դատի ժխտողականութեան:

Արժեւորելով Հայ Եկեղեցու դերակատարութիւնը հայ ինքնութեան պահպանման եւ ամրապնդման հարցում՝ կարեւորում ենք այն, որ.-

Հայ Եկեղեցին 1988ի Սպիտակի երկրաշարժից յետոյ դարձաւ հայութեանը միասնաբար ոտքի հանելու, աղէտի հետեւանքները վերացնելու գլխաւոր նախաձեռնողը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում երկու կաթողիկոսների ձեռամբ սրբադասուեցին Հայոց Ցեղասպանութեան զոհերը, յանուն հաւատքի եւ հայրենիքի նահատակուածները:

Հայ Դատի հետեւողական պաշտպանը եղել եւ մնում է Հայ Եկեղեցին: Հայ Եկեղեցու ներկայացուցիչները տարբեր միջազգային ատեաններում բարձրացնում են Հայոց Ցեղասպանութեան հիմնախնդիրը:

Իւրաքանչիւր տարի Ապրիլի 24ին Սփիւռքում Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի ոգեկոչման արարողութիւնները կազմակերպւում են Սփիւռքի Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիների

գործակցութեամբ՝ յաճախ կազմակերպելով նաեւ համատեղ գիտաժողովներ, հանրային տարբեր միջոցառումներ:

Արցախի պաշտպան հայ զինուորի թիկունքին միասնաբար կանգնած են հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին: 2016 Ապրիլին արցախեան քառօրեայ պատերազմի ընթացքում Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսների համատեղ այցը Արցախ պատմական իրադարձութիւն էր: Յատկապէս յուզիչ էր այն, որ տասնեակ հոգեւորականներ մեկնեցին ճակատ՝ միանալով աշխարհիկ դասի իրենց հայրենակիցներին եւ զէնքով ու աղօթքներով զօրավիգ եղան մեր հերոս զինուորներին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի օրհնութեամբ հոգեւորականներն իրենց ծառայութիւնն են իրականացնում նաեւ հայոց բանակում:

Սփիւռքում Հայ Եկեղեցին ոչ միայն այնտեղ ապրող հայերի, այլեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի կարեւոր զօրավիգներից է:

Համայնքային կարեւոր միջոցառումներ են յատկապէս ՀՀ նախագահի, Արցախի նախագահի եւ բարձրաստիճան այլ պաշտօնեաների այցերը տուեալ երկիր: Այդ օրերին հայկական երեք եկեղեցիները՝ ի դէմս իրենց առաջնորդների, ուղեկցում են ՀՀ, ԼՂՀ նախագահներին եւ ներկայ գտնւում վերջիններիս մասնակցութեամբ իրականացուող միջոցառումներին՝ առանձնակի ոգեւորութիւն հաղորդելով հայկական համայնքներին: Այսպիսով, ընդգծւում է ոչ միայն հայութեան միասնականութիւնն ազգային եւ հոգեւոր յենքի վրայ, այլեւ Հայաստանի՝ իբրեւ համայն հայութեան հայրենիքի եւ հայոց նախագահի շուրջ համախմբումը:

Պէտք է նշել, որ միասնութիւնը չի նշանակում մտածելակերպի կամ գործելակերպի նոյնացում կամ միաձեւութիւն, այլ՝ հայրենիքին ու հայութեանը յուզող հիմնահարցերի, համընդհանուր խնդիրների շուրջ համախմբում, փոխադարձ զիջում ու զոհողութիւն: Հայ Եկեղեցին անգնահատելի դեր է կատարել հայ մշակոյթի պահպանման, զարգացման, տարածման եւ հայապահպանութեան գործում. հայ ձեռագիր մատեանների մեծ մասը ստեղծուել են վանքերում՝ հայ հոգեւորականների կողմից:

Գրեթէ բոլոր թեմական եկեղեցիներին կից գործում են կիրակնօրեայ վարժարաններ, որոնք հայ մանուկներին մայրենի

լեզուով հաղորդում են հոգեւոր կրթութիւն, ինչը հայոց ազգային մշակոյթի առանցքն է:

Բնականաբար, միշտ էլ անհրաժեշտութիւն կայ նոր թափ հաղորդելու տարուող աշխատանքներին:

Հայ Եկեղեցին շարունակում է իր գործունէութիւնը յանուն հայ ժողովրդի եւ Մայր Հայրենիքի հզօրացման, աշխատում Արցախի ճանաչման համար, օգնում սիրիահայերին եւ հայ ժողովրդին համախումբ լինելու հայրենիքի, ազգային նուիրական երազանքների ու նպատակների եւ հայ եկեղեցու շուրջ:

Անհրաժեշտ է պահպանել հայ մշակութային, կրօնական ու ազգային իւրայատկութիւնները:

Հայ Եկեղեցին համայնքային կառոյցների օգնութեամբ կարող է նոր լիցք հաղորդել յատկապէս կրօնական դաստիարակութեանը: Եթէ Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Զատկուայ տօներին քահանան օրհնում է հայկական տներ, կամ ընդհանրապէս կատարում է պսակադրութեան, մկրտութեան, հոգեհանգստեան արարողութիւններ, դա նշանակում է, որ քրիստոնեայ հաւատքը ներկայ է հայ ընտանիքում, եւ նա պաշտպանուած կը լինի աղանդների ներթափանցումից:

Ակնյայտ է, որ այլադաւան եւ այլակրօն հայութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնները ոչ միայն միտուած են մեր ինքնաճանաչողութեանը, այլեւ ազգային անվտանգութեան կարեւոր մաս հանդիսացող հոգեւոր անվտանգութեան ապահովման հրատապ խնդիրների լուծման նպատակ են հետապնդում:

Հարկ է նշել, որ հայկական մայր զանգուածից կրօնական օտարումը լայն դուռ է բացում լեզուական եւ ընդհանրապէս ազգային օտարման առջեւ, իսկ լեզուական օտարումն առաւել արագացնում է դաւանանքային-ազգային օտարումը: Սակայն քրիստոնեայ այլ հոսանքի դաւանանքն ընդունած հայ հաւաքականութիւնների պարագայում միայն յատուկ քաղաքականութեան իրագործման դէպքում կարող է հնարաւոր դառնալ նրանց հայկական ինքնութեան վերադարձը: Այլալեզու, սակայն Հայոց Եկեղեցու դաւանանքը պահպանածները պահպանում են նաեւ հայկական ինքնագիտակցութիւնը եւ զարթօնքի աւելի մեծ հնարաւորութիւն ունեն:

ԱՌԱՋԱՐԿ-ԱՆԵԼԻՔՆԵՐ

Հայութեան համար առաջնայինն ու ամենահիմնականը «Հզօր Հայաստան» գաղափարի շուրջ համախմբուելու հրամայականն է, որին պէտք է հասնել հայոց պետութեան, սփիւռքեան կառոյցների եւ Հայ Եկեղեցու համատեղ ջանքերով:

Սփիւռքի հայ համայնքների ազգային նկարագրի պահպանումը պահանջում է համազգային համախմբում ընդհանուր նպատակի՝ հայապահպանութեան շուրջ, ինչը, ի թիւս այլ գործօնների, ենթադրում է նաեւ Հայ Առաքելական, Կաթոլիկ եւ Աւետարանական եկեղեցական կառոյցների համագործակցութիւն կրթութեան (ազգային լեզուի պահպանում), մշակոյթի (ազգային մշակոյթին հայ համայնքին հաղորդակից դարձնելը), հայապահպանութեան եւ առկայ հիմնախնդիրների լուծման նպատակով:

Է) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Հայ ինքնութեան հիմքում ընկած է նաեւ ընդհանուր պատմութիւնն ու յատկապէս պատմական յիշողութիւնը: Հայութիւնը թէ՛ Սփիւռքում, թէ՛ հայրենիքում նոյն պատմութեան ժառանգորդն է: Բազմադարեայ հայոց պատմութեան մէջ շրջադարձային դարձած Հայոց Ցեղասպանութիւնը հիմքից ցնցեց ազգը՝ բաժանելով նրան մասերի, ազգային հաւաքական հոգեկերտուածքի վրայ դաջելով զոհի բարդոյթը, ծանր յիշողութիւնն ու անամոք ցաւը: Աշխարհասփիւռ հայութեան համար փրկօղակ դարձաւ հայոց ինքնութեան մէջ խարսխուած այն համոզմունքը, որ այնուամենայնիւ երկրիս երեսին մի պատառ հայրենիք՝ ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնը կայ, կորուսեալ երկրի հրաշքով փրկուած մի մասնիկը, որը նաեւ իրենցն է: Եւ այս մի պատառ հողի պաշտպանութեան ու շէնացման հետ միասին անհրաժեշտ է հայրենիքի անցեալի մասին յիշողութիւնը կրել եւ փոխանցել սերունդներին:

Ինքնութեան պահպանման կարեւորագոյն գործօն է յիշողութիւնն անցեալի մասին[22]: Հայոց Ցեղասպանութեան մասին յիշողութիւնը համախմբել է ազգը, վերածուել ազգային ինքնութեան հիմնասիւներից մէկի: Նշելով՝ «*Գիտէ՞ք, որ դեռ հայեր կան, որոնք Տէր Զօր Ուխտի կ'երթան, աւազին մէջէն աճիւններ կը բերեն, կը դնեն սրուակի մէջ, որպէսզի, եթէ ժամանակը ջնջէ հետքերը, այդ սրուակներուն մէջ անթեղուած հոգիները արթննան եւ յիշեցնեն...*»[23], ֆրանսահայ գրող, հրապարակախօս Յակոբ Պալեանը

կատարում է հետեւեալ կարեւոր եզրայանգումը. «*Պիտի յաջողի՞նք ըսել՝ ոչ միայն մեր նախահայրերու հողը, այլ՝ մե՛ր հողը, ոչ անոնց ջարդը՝ այլ նաեւ մեր տեւող ցաւը, ոչ մեծ հայրիկի լեզուն՝ այլ մեր լեզուն… Այս կ՚ըլլայ հայու յիշողութիւն, որ պատմութենէն աւելի է:*

Յիշողութիւնը ընտանիքէ դուրս պէտք է բերել. ան պէտք է դադրի անհատական ըլլալէ .. դառնայ եզակիութիւն՝ բոլորին համար»[24]:

Յիշողութեան ստեղծած զգացական իրավիճակն ամբողջ աշխարհի հայերին կապում է միմեանց՝ առանց դժուարութեան տեղափոխելով տարածքից տարածք, դարից դար: Պատահական չէ, որ հրեաները շեշտում են՝ «Եթէ չյիշես՝ կը պատժուես», իսկ Հին Կտակարանում 167 անգամ գրուած է՝ «յիշել»: Յիշելը, պատմական յիշողութիւնը, Հայաստանը պահպանելու միտքն է, որ շաղկապում է հայ ժողովրդին:

Հայ ժողովրդի կեանքում համազգային նշանակութեան իրադարձութիւնները (Հայոց Ցեղասպանութիւն, Ղարաբաղեան Շարժում) յանգեցրել են ազգային ինքնութեան նոր տարրերի ձեւաւորմանը[25]: Արցախեան հիմնահարցի, հայոց պետութեան հզօրացման, Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման համար պայքարը հայ ազգային ինքնութեան կարեւոր բաղադրիչներն են:

Այս առումով կարեւոր եզրայանգում է կատարել բանագէտ, բանահաւաք, ցեղասպանագէտ Վերժինէ Սվազլեանը, նշելով, որ «…*Ցեղասպանութիւնը քաղաքական զանգուածային ոճիր է եւ այն չպէտք է անպատիժ մնայ, այլ պէտք է իրաւաբանօրէն բացայայտուի նաեւ* ***ականատես վերապրողների վկայութիւնների հիման վրայ****: Իսկ ամենամեծ վկան ինքը՝ ժողովուրդն է* (ընդգծումը - Վ.Ս.), *որը, ցաւագնօրէն վերապրելով, պատմել ու դեռ շարունակում է պատմել՝ վկայելով իր ողբերգական անցեալը: Անցեալ, որը հայ ժողովրդի անցեալն է, նրա պատմութիւնը, նրա պատմական հաւաքական յիշողութիւնը, որը պէտք է ներկայացուի աշխարհին ու մարդկութեան արդար դատին*»[26]:

Իւրաքանչիւր սերունդ ինքնութեան պահպանման փնտռտուքի մէջ է, որին ուղեկցում է նախեւառաջ պատմական յիշողութիւնը: Յիշողութիւնն է, որ «տեղափոխւում» է առանց աշխարհագրական, ֆիզիկական կամ այլ սահմանափակումների, փոխանցւում է սերնդէսերունդ: Յիշողութեամբ տրուած զգայական կապն է տանում դէպի համերաշխութիւն, բարեգործութիւն, միմեանց

օգնելու ցանկութիւն (ծերանոցներին, մանկատներին, բռնագաղթուածներին աջակցութեան ծրագրեր իրականացնելու մղում): Դրան աւելանում են մշակութային հարուստ ժառանգութիւնը, հազարամեակների պատմութիւնը եւ, իհարկէ, պատմական խոշոր անհատներն (Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Նարեկացի, Ուիլիըմ Սարոյեան, Արշիլ Գորկի, Յովհաննէս Այվազովսկի, Քըրք Քըրքորեան, Շարլ Ազնաւուր եւ այլք) ու ազգի համար շրջադարձային պատմական իրադարձութիւնները:

«*Անկախ նրանից, թէ հայը որտեղ եւ ինչ հասարակաան-պետական համակարգում է ապրում, ինչպիսի լեզուամտածողական, ազգային արժէքնկալման, հոգեւոր ու ճանաչողական առանձնայատկութիւններ ունի, որպէս ընդհանրական ու հաւաքական յատկանիշ՝ մնում է պատմական ճակատագիրը, պատմական յիշողութիւնը, տեսակի պահպանութեան նկատմամբ բնական պարտքն ու պատասխանատուութիւնը: Սա պէտք է դառնայ մեր գործակցութեան գլխաւոր կարգախօսը*»՝ ընդգծել է ՀՀ Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը[27]:

ԱՌԱՋԱՐԿ-ԱՆԵԼԻՔՆԵՐ

Մենք ունենք հայի կերտման, հայ աշխարհաքաղաքացու ձեւաւորման խնդիր: Հայութեան մեծ հատուածը հայրենիքից դուրս է ապրում, հետեւաբար հայ մարդու տեսակի պահպանումը օրուայ հրամայականն է: Ուստի, կարեւոր խնդիր, համազգային առաջնահերթութիւն պէտք է համարել.-

Խրախուսել նոր՝ կարծրատիպերից ազատ ժամանակակից հայի ձեւաւորումը, դաստիարակել իր բնակութեան երկրի հասարակութեանը համարկուած, այդ հասարակութեան մէջ յաջողութիւններ արձանագրած, միեւնոյն ժամանակ իր պատմական հայրենիքին, իր հայկական ինքնութեանը հաւատարիմ սերունդ: Ամբողջապէս արմատախիլ անել փոքր ազգ լինելու բարդոյթը եւ սփիւռքահայերի ու տաղանդաշատ անհատների օրինակով կերտել հպարտ հայի արժանապատիւ կերպարը, մանկուց սերմանել այն մտայնութիւնը, որ պատկանելութիւնը՝ հայութեանը, հպարտութիւն է:

Հայ երիտասարդին կարելի է դաստիարակել այն գիտակցութեամբ, որ եթէ հայկական գէն է կրում, ուրեմն պէտք է լինի կրթուած, գրագէտ, ժամանակի պահանջներին համահունչ եւ իր մասնագիտութեան մէջ առաջատար ու մրցունակ:

21րդ դարում հայ ինքնութեան զօրեղացմանը, հայկական ինքնութեան պահպանմանն էականօրէն նպաստում է ինքնութեան վերաթարմացումը, երիտասարդացումը, վերաձեւակերպումը, որին կարելի է հասնել, երբ իւրաքանչիւր հայ ընտանիք իմանայ իր գերդաստանի պատմութիւնը, ունենայ իր տոհմածառը՝ պահպանելով գիտակցուած զգացական կապը Մայր Հայրենիքի հետ: Ինքնութեան պահպանմանը միտուած գործողութիւններին անհրաժեշտ է աւելացնել նոր գործօններ եւ ազդակներ:

Որպէս հայ ինքնութեան գլխաւոր աղբիւր՝ դէպի քրիստոնեայ եւ աստուածաշնչեան երկիր՝ Մայր Հայաստան երիտասարդութեան պարբերական այցելութիւններ, ուխտագնացութիւններ կազմակերպելով է հնարաւոր կանխել վերահաս ուծացման վտանգները, պահպանել հայ ինքնութիւնը, մայրենին: Ուստի հարկաւոր է առաւել աշխուժացնել Սփիւռքի կապերն ու յարաբերութիւնները վերածնուած հայկական երկու պետութիւնների՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի հետ: Նպատակ պէտք է դնել, որ հայ երիտասարդը հայրենիքի վերացական գաղափարը կարողանայ վերածել իրականութեան, իրապէս ճանաչի Մայր Հայրենիքը, իմանայ նրա հոգսերն ու ձեռքբերումները, մասնակցի հայրենանպաստ ձեռնարկների ու մի օր էլ բռնի հայրենիք բերող ճամփան:

Անհրաժեշտ է տարբեր եղանակներով աջակցել պատմական Հայաստանի տարածքում բնակուող ուծացած եւ ծպտեալ հայերի ինքնութեան վերազարթօնքին: Ինքնութեան վերականգնման ծրագրերի առաջնային պահանջը ուծացած եւ ուծացման եզրին յայտնուած հայի մէջ իր էթնիկական պատկանելութեան գիտակցութեան ձեւաւորումն է:

Անհրաժեշտ է լայնածաւալ եւ համատեղ աշխատանքներ իրականացնել՝ կրկնապատկելու Սփիւռքում ազգային ինքնութեան պահպանմանն ու զարգացմանն ուղղուած ՀՀ Սփիւռքի Նախարարութեան ծրագրերը, որոնք մեծ ընդգրկում ունեն եւ դրական արձագանգ են ստացել Սփիւռքի երիտասարդութեան շրջանում՝ որպէս հայրենաճանաչութեան եւ կրթական ծրագրեր: Կարեւոր են նաեւ սփիւռքահայ երիտասարդների համար մայրենիի իմացութեանն ուղղուած ձեռնարկները: Արդէն քննութիւն են բռնել «Իմ Հայաստան» համահայկական փառատօնը, «Սփիւռք» ամառային դպրոցը, «Արի Տուն» ծրագիրը, համահայկական մասնագիտական ու Հայրենիք-Սփիւռք համաժողովները:

Հայաստան-Սփիւռք գործակցութեան շրջանակներում այլ նախարարութիւնների հետ համատեղ Սփիւռքի Նախարարութիւնը պէտք է աջակցի համահայկական փառատօների, ցուցահանդէսների, գիտաժողովների, սեմինարների կազմակերպմանը եւ մշակութային քաղաքականութեան քարոզչութեանը:

Հայ ընտանիքն ամրապնդելու եւ հայեցի պահպանելու համար հայոց պետութեան եւ սփիւռքեան կառոյցների կարեւոր խնդիրն է պահպանել եւ փոխանցել սերունդներին հայկական աւանդոյթներն ու սովորոյթները, կենցաղն ու բարքերը: Քարոզչական աշխատանքները կարող են օգնել երիտասարդ ընտանիքներին՝ կարեւորելու հայկական անուն-ազգանունները՝ որպէս հայ ինքնութեան պահպանման, ազգային պատկանելութեան գրաւական ու էական ցուցիչներ, որոնցից չպէտք է հրաժարուել:

Խառնամուսնութիւնների հետեւանքով ձեւաւորուած ընտանիքների հետ աշխատելու համար հարկաւոր է համայնքներում մշակել ծրագիր՝ զոյգի ոչ-հայ անդամի կարողութիւններն ի նպաստ հայկական խնդիրների լուծմանն օգտագործելու, ինչպէս նաեւ երեխաների կապը համայնքի եւ Հայաստանի հետ ուժեղացնելու, հայ մշակոյթի հետ ծանօթացնելու եւ ազգային արժէքներին հաղորդակից դարձնելու նպատակներով:

Մշակութային կենտրոններ, Հայ Տներ ստեղծել այն համայնքներում, որոնցում այդպիսիք չկան, իսկ արդէն գործող կենտրոնների համար աւելացնել ֆինանսաւորումը՝ օգտագործելով ՀՀի, Սփիւռքի, հասարակական կազմակերպութիւնների եւ տուեալ երկրի հնարաւորութիւնները:

Պետական եւ սփիւռքեան կառոյցների ուժերով Հայաստանի Հանրապետութիւնում նպատակայարմար է ստեղծել Սփիւռքի պատմութեան թանգարան (առանձին կամ Ցեղասպանութեան թանգարանի կազմում):

Ներկայ փուլում որպէս Հայաստանի եւ Սփիւռքի հզօրացման գործօն եւ դրանց զարգացման հիմք պէտք է հանդէս գան հայրենական եւ Սփիւռքի դրամագլուխը, մարդկային աղբիւրները, հայրենիքի եւ Սփիւռքի կառոյցները, իսկ որպէս ընդհանուր գաղափարախօսութիւն՝ հայրենասիրութիւնը, քանզի ինչպէս նշում էր Գարեգին Նժդեհը՝ «*Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, կործանւում՝ դրա պակասի պատճառով*»[28]: Հայաստան պէտք է գայ հայկական դրամագլուխը՝ վերածուելով

աշխատատեղերի, ծրագրերի, գործերի՝ օժանդակելով արտագաղթի եւ աղքատութեան կրճատմանը: Սփիւռքը կարող է դառնալ աշխատատեղերի ստեղծման աղբիւր:

Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է: Հետեւաբար, իւրաքանչիւր հայ իր օգնութիւնը պիտի բերի հայրենիքին՝ իր գիտելիքներով, կարողութիւններով, կապերով ու գործունէութեամբ: Անհրաժեշտ է գիտելիքներից ու կարողութիւններից բաժին հանել նաեւ հայրենիքին, «Ամէն ինչ հայրենիքի համար» շարժման մասնակից դարձնել իւրաքանչիւր հայի:

ՍՓԻՒՌՔԵԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սփիւռքի կեանքը վերակազմակերպելու եւ վերաշխուժացնելու նպատակով կառոյցների ղեկավար մարմիններում անհրաժեշտ է ընդգրկել երիտասարդութեանը, կանանց: Համամարդկային եւ համահայկական, ազգային արժէքների զուգադրմամբ երիտասարդութեանը պէտք է ներգրաւել ազգային գործերի մէջ: Երիտասարդութեան գործուն մասնակցութիւնը Սփիւռքի կեանքին՝ նշանակում է Սփիւռքի կառոյցների երիտասարդացում, նրանց մօտեցումների, գործելակերպերի ու գործունէութեան արդիականացում: Սփիւռքի կառոյցների միջոցով, ՀՀ Սփիւռքի Նախարարութեան օժանդակութեամբ պէտք է հաշուառել հայկական ներուժը, հնարաւորութիւնները՝ հզօրացնելու եւ ամրացնելու մասնագիտական կառոյցներն ու ցանցերը:

Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Փոլ Հայտոսթեանն հայկական սփիւռքում հայ ինքնութեան կերտման հիմնական գործօններ իրաւամբ համարում է ընտանիքը, «*ուր կը կերտուի հոգին, իսկական արժէչափը, սիրոյ եւ անսակարկ հոգածութեան ճամփով ինքզինք գտնելու եւ իրագործելու առիթը*», կրթական կառոյցները, որոնցում «*երկխօսութեան կը մտնեն հայկականն ու միջազգայինը, հաւաքականն ու անձնականը, անցեալը, ներկան ու ցանկալի ապագան*», Եկեղեցին, «*ուր հոգիի հզօրութեան, սիրոյ, յոյսի, ներումի, հաւաքական գործակցութեան, ծառայութեան, բարեգործութեան, նուիրումի, սրբութեան եւ յաւիտենականութեան խորհուրդները իմաստ եւ արտայայտութիւն կը գտնեն եւ հաղորդութեան ու հաղորդակցութեան աշխարհ մը կը ծաւալեն*», մշակութային մարմիններն ու ծրագրերը, «*ուր գեղարուեստ, երգ ու պար, աստունք, գիրք ու պատկեր կը մշակուին: Հոն ուր ի մի կու*

գան խօսք, շարժում, գեղեցիկի որոնում, ստեղծագործութիւն ու պատմութիւն, ընկերական ու հաւաքական զգացում», ընկերաբանական ու բժշկական կենտրոնները, որոնք «*հայկական հոգատարութեան ինքնաբաւութեան ջանքեր են, ընկերային ապահովութեան զգացում յառաջացնող, հայկական ու համահայկական հոգատարութեան առիթ ստեղծող, հայկական մէկտեղումի միջավայր գոյացնող*», քաղաքական կուսակցութիւնները, որոնք «*աշխարհի ուժերու եւ շահերու մրցումները քննող եւ անոնց մէջ գործող հայանպաստ ներկայութիւն հաստատող-յառաջացնող միջոցներ-հաստատութիւններ են*», մամուլն ու հաղորդակցութեան միջոցները, որոնք «*կը կապեն հայը հայուն, Հայաստանին, աշխարհին՝ յաճախ հայերէնի օգտագործումով*», աշխատատեղերը, «*ուր յաւելեալ ներհայկական ամրութիւն կը ստեղծուի նաեւ նիւթական ու ընկերային իմաստներով*», հայկական թաղամասերը «*ինչպէս՝ Պէյրութի, Հալէպի, Քեսապի, Այնճարի, Թեհրանի, Հոլիուուտի կամ Պոսթոնի մէջ, ուր հայկական հայրենիքի սարոյեանական իրականութիւններ կը զարգանան, եւ հայկականութեան մէկ տարբերակը ապրելու առիթները կը շարունակուին*»[29]:

Հայ ինքնութեան պահպանումը շարունակում է մնալ հայոց պետութեան հիմնական առաջնահերթութիւններից մէկը, եւ պատահական չէ, որ դեռեւս 2008ին հանրապետութեան նախագահը համապարփակ ձեւով անդրադարձաւ այդ խնդրին՝ նշելով. «*Ամէնից առաջ անհրաժեշտ է ձեւաւորել եւ ձեւակերպել հայկական նոր ինքնութիւնը: Ինքնութիւն, որը պիտի դառնայ հայի փարոսը նոր դարում: Հայկական ինքնութիւնը պիտի լինի մարդակենտրոն, ազատակենտրոն ու իրաւակենտրոն: Ազատութեան եւ իրաւունքի վրայ հիմնուած ինքնութիւնն է առաւել քան հրապուրիչ եւ զօրացնող: Այն կարող է ամուր յենք լինել հայի համար իր երկրի հասարակութեանն ինտեգրուելու եւ ներքին բարդոյթներից ու հակասութիւններից ազատ հոգեկերտուածքով յաջողութիւնների հասնելու համար: Ինտեգրուելու՝ որպէս հայ, որպէս ազատ մարդ, որպէս իր մշտական բնակութեան վայրի յաջողութեանը նուիրուած քաղաքացի: Նման ինքնութեամբ հայն իր երկրի լաւագոյն քաղաքացին է, նրա յենարանը: Ուրեմն, լաւ հայը՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների, Ռուսաստանի կամ Վրաստանի լաւ քաղաքացին է: Ուրեմն լաւ հայը միշտ եւ ամէնուրեք մրցունակ է, մրցունակ ազգի ազգային*

մրցունակութեան կրողը՝ իր ստեղծած արժէքներով, ապրանքներով, մատուցած ծառայութիւններով: Հայկական ինքնութեան առանցքը հայկական հպարտութիւնն է: Հայկական հպարտութեան խարիսխը՝ մրցունակութիւնը: Մրցունա՞կ են արդեօք Հայաստանի քաղաքացին ու հայ մարդը: Ե՛ւ այո եւ պիտի՛ դառնան»[30]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Ինքնութիւն*, թիւ 1, Հումանիտար Հետազօտութիւնների Հայկական Կենտրոն, Երեւան, «Կամար», 1995, էջ 173:

[2] «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի Ելոյթը ԱՄՆում ՀՀ Դեսպանութեան, ՄԱԿում ՀՀ Մշտական Ներկայացուցչութեան Եւ Ամերիկահայ Առաջատար Կազմակերպութիւնների Կողմից Կազմակերպած Հանդիսաւոր Ընդունելութեանը», 24.09.2008՝ http://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24 (news-18):

[3] Լ. Զեքիեան, *Ինքնութեան Խճանկար* (աշխատասիրեց Ս. Գասպարեան), Պէյրութ, 2011, էջ 16:

[4] «Լեզուի Մասին» *ՀՀ օրէնք*, Յօդուած 1:

[5] Հ. Յակոբեան, *XXI Դարի Մարտահրաւէրները Գլոբալացուող Աշխարհում: Հայ Երիտասարդութիւնը Եւ Նոր Հարիւրամեակի Մարտահրաւէրները*, Երեւան, Նոյեան Տապան, 2008, էջ 37:

[6] *Տեղեկատուական Փաթէթ Հայաստան-Սփիւռք Չորրորդ Համաժողովում (2011 Սեպտեմբերի 19-20, Երեւան) Արուած Առաջարկութիւնների Կատարման Վերաբերեալ, 19-20 Սեպտեմբերի*, Երեւան, 2014, էջ 7:

[7] Հարցախոյզի արդիւնքները ներկայացուել են *Զարթօնք* օրաթերթի գլխաւոր խմբագիր Սեւակ Յակոբեանի՝ ՀՀ Սփիւռքի Նախարարութեանը տրամադրած «Լիբանանահայ Գաղութին Առջեւ Ծառացող Խնդիրներ. Դիտարկուած՝ Լիբանանահայ Ընտանիքին, Դպրոցին, Եկեղեցական Հաստատութեան Եւ Մեդիայի Պարունակներուն Մէջ» հետազօտութեան հիման վրայ:

[8] Նոյն:

[9] Տուեալները ներկայացուել են *Հայ Սփիւռք Հանրագիտարան*ի եւ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան տուեալների հիման վրայ:

[10] *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, էջ 362. նաեւ՝ Ա. Զաքարեան, «Հնդկաստանի Հայ Համայնքը (Պատմամշակութային Անդրադարձ)», էջ 185-186, http://kantegh.asj-oa.am/1778/1/181-187.pdf:

[11] www.haigazian.edu.lb:

[12] ARPAinstitute.org:

[13] «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Ելոյթը Հայաստան-Սփիւռք Չորրորդ Համաժողովում», *Սփիւռքի Կազմակերպութիւնների Ղեկավարների Եւ Ներկայացուցիչների Համահայկական Համաժողով. Համաժողովի Նիւթեր*, էջ 11:

[14] «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը Սուրբ Ծննդեան Եւ Աստուածայայտնութեան Տօնի Առթիւ, Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2010», էջ 5՝ http://www.etchmiadzine.am/pdf/e2010/20100101.pdf:

[15] «2004-ը՝ Հայ Ընտանիքի Տարի», *ՀԱՍԿ*, Յունուար թիւ 1, 2004, էջ 13:

[16] Քրիստոնէական միջավայրում խառնամուսնութիւնների աւելի մեծ թուի մասին են վկայում դեռեւս 1988ին՝ Խորհրդային տարիներին անցկացուած մարդահամարի տուեալները, որոնց համաձայն Ռուսաստանում այդ թուականին ամուսնացած հայ տղամարդկանց շուրջ 63,5%ը (4545 մարդ) ամուսնացել էր օտարազգիների հետ, իսկ քաղաքներում այդ թիւը մօտենում էր 70%ի, կանանց խառնամուսնութիւնները կազմում էին 43%, իսկ քաղաքներում՝ 49%: Այդ տարիներին գրեթէ նոյնպիսի ցուցանիշներ են գրանցուել ԱՄՆի, Ֆրանսիայի, Կանադայի հայերի միջավայրում (*Население СССР, 1988, Статистический Ежегодник (ԽՍՀՄ-ի բնակչութիւնը, 1988, վիճակագրական տարեգիրք)*, Մոսկուա, 1988, էջ 216-217: Առաւել մանրամասն տե՛ս նաեւ՝ Էդ. Մելքոնեան, «Խառնամուսնութիւնները եւ Ազգային Ինքնութիւնն Արեւմուտքի Երկրների Հայ Համայնքներում. Հայեացք Երեւանից»՝ *Հայ Ինքնութեան Որակների Պահպանումը Խառնամուսնութիւններում, Գիտագործնական Համաժողով, Զեկուցումների ժողովածու*, ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն, Երեւան, «Նորք» ՓԲԸ, 2010, էջ 21-22, 35):

[17] Լ. Շանթ, *Ազգութիւնը Հիմք Մարդկային Ընկերութեան*, Երեւան, 2008, էջ 43:

[18] «ՀՀ Սփիւռքի Նախարար Հ. Յակոբեանի Բացման Խօսքը "Հայ Ինքնութեան Որակների Պահպանումը Խառնամուսնութիւններում" Գիտագործնական Համաժողովում», *Հայ Ինքնութեան Որակների Պահպանումը*, էջ 12:

[19] Յովհաննէս Շիրազ, *Երկերի ժողովածու, Հտր. 2*, Երեւան, 1982, էջ 242-247:

[20] http://whc.unesco.org/en/about/ :

[21] *ՀՀ Սահմանադրութիւն*, Երեւան, 2016, էջ 6-7:

[22] Մ. Դաբաղ, «Յիշողութեան Հայկական Քաղաքականութիւնը Գլոբալիզմի Դարաշրջանում»՝ *21-րդ Դարի Մարտահրաւէրները եւ Հայաստանի Անվտանգութեան Հիմնախնդիրները. Քաղաքագէտների եւ Միջազգայնագէտների Համահայկական Համաժողով. Համաժողովի Նիւթեր (19-20.11.2012)*, ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն, Երեւան, Զանգակ Հրատ., 2014, էջ 198-221. նաեւ՝ Հիլտա Զոբոյեան, «Եւրոպայում Հայկական Յիշողութեան Քաղաքական Մարտահրաւէրները», նոյն, էջ 222-228:

[23] Յ. Պալեան, *Մարդը ժամանակին Հետ (Պատմուածքներ եւ Ապրումներ)*, Երեւան, 2014, էջ 20:

[24] Յ. Պալեան, «Ընինք 100-ամեակ. Ամեակներէն Առաջ Ըսուածը Ամեակներէն Վերջի Մասին եւ Իմ Ընթերցումս «Խանձուած Օրերու»՝ Պերճուհի Աւետեան, *Խանձուած Օրերը*, Համազգայինի «Վ. Սէթեան» Հրատ., Պէյրութ, 2016, էջ 9:

[25] Յարութիւն Մարութեան, «Յեղասպանութեան Յիշողութիւնն Իբրեւ Գործօն. Արդի Վիճակը եւ Հնարաւոր Զարգացումները», *Մարդ եւ Հասարակութիւն, Գիտամեթոդական Վերլուծական Ամսագիր*, Երեւան, № 1, 2010, էջ 27:

[26] Վ. Սվազլեան, *Հայոց Յեղասպանութիւն. Ականատես Վերապրողների Վկայութիւններ,* խմբ.՝ Ս. Յարութիւնեան, թուրքերէնի խմբ.՝ Տ. Տէր Ողորմիաճեան, ՀՀ ԳԱԱ Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ, Բ. համալրուած հրատ., Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2011, էջ 62-63, 721:

[27] Գ. Յարութիւնեան, «Հայաստան-Սփիւռք Գործակցութեան Համակարգային Զարգացումների Ներկայ Հրամայականները»՝ *Սփիւռքի Կազմակերպութիւնների Ղեկավարների եւ Ներկայացուցիչների Համահայկական Համաժողով. Համաժողովի Նիւթեր*, Երեւան, Տիգրան Մեծ Հրատ., 2011, էջ 69:

[28] Գարեգին Նժդեհ, *Հայրենիք*, Հրատ.՝ Հայաստաի Հանրապետական Կուսակցութիւն, «Ամարաս», Երեւան, 2006, էջ 29:

[29] Վեր. Փ. Հայտոսթեան, «Ինքնութեան Կերտման Հիմնական Գործօնները Սփիւռքի Մշակութային եւ Քաղաքական Ենթահողին Վրայ»՝ *Հայկական Ինքնութեան Խնդիրները 21-րդ Դարում, Գիտաժողովի Զեկուցումներ*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2013, էջ 15-16:

[30] «Նախագահ Սերժ Սարգսեանի Ելոյթը ԱՄՆում»:

ARMENIAN IDENTITY ISSUES

(Summary)

HRANUSH HAKOBYAN
minister@mindiaspora.am

The author stresses the fact that Armenian identity is one of the most critical issues the Armenian space has been facing lately, particularly now that globalisation is in full effect.

The article lists and discusses the basic factors that lead to assimilation and the channels through which assimilation functions. The author categorizes a number of tracks where assimilation processes are especially strong.

The article sheds light on the challenges and concerns about Armenian identity, the difficulties it faces both in Armenia and the Diaspora, and the hardships Armenian families, institutions and individuals encounter while making an effort to preserve diverse aspects of the Armenian identity. The author, the Minister of the Diaspora, analyzes Armenian identity preservation issues and provides ways to address diverse predicaments for Armenian identity, including pillars for preserving and strengthening Armenian identity.